# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» Մայիսի 2026 թվականի N 1461 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ № 2/36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 103.16 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (87.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 510.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ՀՈՎԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու № 2/36 հասցեի 510.0 (հինգ հարյուր տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19032026-08-0035 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» պրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայքնի ավագանու 2026 թվականի ապրիլի 13-ի № 73-Ա որոշումը և քաղաքացի Աղասի Հովիկի Գևորգյանին դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 30-ին № 13695 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու № 2/36 հասցեի 103.16 (մեկ հարյուր երեք ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (87.62 (ութսունյոթ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 440080 (չորս հարյուր քառասուն հազար ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Աղասի Հովիկի Գևորգյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու № 2/36 հասցեի 510.0 (հինգ հարյուր տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 957780 (ինը հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Աղասի Հովիկի Գևորգյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Աղասի Հովիկի Գևորգյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աղասի Հովիկի Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել Աղասի Հովիկի Գևորգյանի միջոցների հաշվին:

Восстановимая подпись

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**